«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Հոդված 26. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է տասը միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից:

2. Անկախ աուդիտորի եզրակացությունը՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված տարեկան ֆինանսական հաշվետվությունների հետ միասին, կցվում է սույն օրենքով սահմանված հաշվետվությանը:

Deleted: 1. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից: ¶
2. Անկախ աուդիտորի եզրակացությունը կցվում է սույն օրենքով սահմանված հաշվետվությանը: